ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ԳԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՍՈՒՐԵՆ ՖԵՍՃՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱՉԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Նյու Յորք, ԱՄՆ

Սիրելի Սրբազան.

Ցավով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, ազգային բարերար տիար Սուրեն Ֆեսճյանի մահվան մասին: Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Գերագույն Հոգևոր Խորհրդի Մեր ցավակցությունն ենք բերում Ձեզ, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի հավատավոր Մեր զավակներին և Մեր մասնավոր վշտակցությունը՝ հանգուցյալի բոլոր հարազատներին ու մերձավորներին:

Շնորհընկալ ու Աստվածահաճո կյանք ապրեց երջանկահիշատակ Սուրեն Ֆեսճյանը, բարեգործությամբ պսակյալ հավատավոր կյանք՝ լեցուն ամբողջական նվիրումով հանդեպ հարազատ ժողովուրդն ու մեր Սուրբ Եկեղեցին: Տերը օրհնեց նրան երկար կյանքի տարիներով՝ անխոնջ գործունեությամբ ծառայելու Հայ Բարեգործական Ընդհանուր Միությանը, Վարդանանց Ասպետների Եղբայրակցությանը, Թեքեյան Մշակութային Միությանը, բարեգործական ու բարեսիրական ազգային այլ կազմակերպություններին: Հոգելույս Սուրեն Ֆեսճյանը իշխանական նվիրատվություններով մասնակից եղավ ազգօգուտ ու եկեղեցաշեն բազում ձեռնարկների իրականացմանը, որոնք բարի անուն ու համազգային ճանաչում բերեցին երախտարժան բարերար հայորդուն: Հանգուցյալը հպարտությամբ էր կրում երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ձեռքով շնորհված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, որ արժանի և բարձր գնահատությունն էր իր մեծ եկեղեցասիրության և հայրենանվեր վաստակի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Ողորմածն Աստված՝ հայցելով, որ Տերը արարչական Իր սիրով գթա հավատավոր Իր ծառային, խաղաղության մեջ ընդունի նրա լույս հոգին և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի Ֆեսճյան ընտանիքի սգակիր անդամներին:

Երկնառաք օրհնություն ննջեցյալի խնկելի շիրմին:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
26 հունվարի 2002 թ.